



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«05» հոկտեմբերի 2017 թվականի N: 113 ք.Գյումրի

## ԱՐԱՄ ԱՆՏՈՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի» 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի 2017 թվականի հոկտեմբերի 4-ի զեկուցագիրը.

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստան Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Արամ Անտոնյանին գործուղել քաղաք Երևան՝ «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով սահմանված թափանցիկության, հանրային հաշվետվողականության և մասնակցության ապահովման պարտավորությունների 2017 թվականի մշտադիտարկման տարեկան զեկույցի վերաբերյալ քննարկումներին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը 1 օր՝ 2017 թվականի հոկտեմբերի 10-ին:



Իսկականի հետ ճիշտ է

Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ  
/պաշտոնակատար/